թեան. լուութիւն նոցա՝ զբարեհաճութիւն կամաց նոցա ետոյց մեզ։ Երկրորդ զիա՞րդ կարէի ժամանակ խնդրել հարցանելոյ. ընծայարերն միթէ համբերէ այլ եւս երեք ամիս։ Տէրութիւնն յե՞րբ եհարց վասն Կայսերական պարգեւին, պարտ էիք՝ բանիւ կամ գրով ասել՝ թէ սաստութիւն է բարեպաշտ Թագաւորաց եւ Իշխանաց ազօթք օրհնութիւն խնդրել, և ոմանք ընծայ առաքեն եկեղեցական անօթ՝ Խաչ և այլն։ Գեղեցիկ էր Տաճկական յայտարարութիւն, որ վասն Կայսերական պարգեւին. բայց Տէրութիւնն ոչ բնաւ պատասխանի տայ։ Եւրոպացիք բազմացան ասա. դան առ մեզ՝ հարցանեն վասն մեր եկեղեցւոյ դաւանութեան, վասն պաշտամանց՝ և խորհրդոց, մեք կարդաւ իբրեւ դնեմք առաջի նոցա զամենայն պարագայիւք և բացատրութեամբ, խոստովանին թէ՝ յառաջին դարս՝ ամենայն եկեղեցիք Քրիստոնէից այսպէս պաշտէին. բայց հետ զհետէ հեշտասիրութիւն և ագահութիւն եկեղեցականաց՝ նորանոր նորաձեւութիւն եմոյծ յեկեղեցական պաշտամունս, և եղեն պատճառ այսչափ հերձուածողութեան և հակառակութեան, այլ ձեր եկեղեցին՝ խոստովանիմք, անարատ կացեալ է ուղղափառ և առաքելական. վասն այնորիկ սիրելի էք ամենայն ազգաց, և ցանկամք միշտ ընդ ձեզ խօսիլ և հարցանել, և հաւատամք անկեղծ բանից ձերոց»։ (1845)։

Յետ ընդունելոյ Զաքարիա Պատրիարքի զնշանն Կայսէր Ռուսաց, տուաւ նաեւ նշան պատուոյ 'ի Սուլթան Մէճիտ Արքայէ Օսմանցւոց, զոր առաքեաց Մատթէոս Պատրիարք յԵրուսաղէմ 'ի ձեռն Վրթանէս վարդապետի աշակերտին իւրոյ։

Տուն մի 'ի կալուածոց վանաց Յոպպէի յափշտակեալ յայլազգեաց, արաբեալ էին զայն տեղի կառավարութեան. միաբանք Հայոց բազում աշխատ եղեն վասն ազատութեան նորին, այլ չեղեւ հնար. զի այլազգիք Յոպպէի ասէին. տունն է 'ի կալուածոց Հայոց, բայց Տէրութիւնն վճարէ զտարեկան վարձն, եւ բաց յայսմանէ ոչ գոյ այլ տեղի. և Բդեշխքն երկարէին զխնդիրն, այլ յետոյ ազատեցաւ ձեռնտուութեամբ և Ջանիւք Ճանիկ Ամիրայի՝ յորժամ եկն յուխտ յԵրուսաղէմ եւ դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս։